



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 120583

«29» հունիս 2018 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետի և 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով.

հրամայում եմ

1. ԵՊՀ-ում աշխատողների ամսական աշխատավարձի չափերը սկսած 01 սեպտեմբեր 2018 թ.-ից բարձրացնել 15 (տասնհինգ) տոկոսով, 01 հունվար 2018 թ.-ի դրությամբ կուտակված դրամական միջոցների հաշվին:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված աշխատավարձի բարձրացումը չի տարածվում գիտական և գիտատեխնիկական աշխատանքներում ներգրավված անձանց, որոնց աշխատավարձը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև տնտեսվարական եղանակով գործող կառուցվածքային ստորաբաժանումների, դրամաշնորհային, լրացուցիչ կրթական և այլ ծառայություններ իրականացվող ծրագրերում ներգրավված աշխատողների սահմանված աշխատավարձերի վրա:

3. Սույն հրամանի կատարումն ապահովելու նպատակով հանձնարարել ԵՊՀ հաշվապահությանը և անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը՝ կատարելու համապատասխան հաշվարկներ և ձևակերպումներ:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 01 սեպտեմբեր 2018 թ.-ից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ